

**Հասմիկ Պետրոսյան**  
 Հայաստանի պարմության թանգարան  
 hasmikpetrosyanmuseum@gmail.com

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԼՈՌԿԱ ԿԱՐՊԵՏԱՋՅՈՒՄ ՄԿՐԱՏԱՄԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱՆՈՒՄ

*բանալի բառեր.* կարպետագործ մկրատաման, տնայնագործություն, բուրդ, ոչ-խար, խուզելու մկրատ, գորգագործական աշխատանքային գործիքներ

ՀՀ թանգարանային ֆոնդում ոչխար խուզելու մկրատի համար նախատեսված կարպետագործ պատյանների՝ մկրատամանների օրինակները սակավաթիվ են: Ըստ նյութական վկայությունների և շրջաններում դրանց գործածության տվյալների, շեշտադրվող տարածաշրջանները Լոռին է, Սյունիքը և Արցախը: Օրինակները Լոռիից են և Սյունիքից<sup>1</sup>, Արցախում դրանց գոյությունը փաստում է Մանյա Ղազարյանի հաղորդումը՝ թվելով դրանք կարպետագործ առարկաների շարքում (Ղազարյան 1993, 101): Սա անշուշտ չի բացառում գորգագործական այլ կենտրոններում կարպետագործ նմանօրինակ առարկաների կիրառությունը, որի համար սակայն, առայժմ չունենք տվյալներ: Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական գործվածքի հավաքածուն համալրվել է 1934–35 թթ. Ստեփան Լիսիցյանի գլխավորությամբ Լոռի կատարած գիտարշավների արդյունքում: Օրինակները Շահալի (այժմ՝ Վահագնի), Հաղպատ, Մարց գյուղերից են (սկ.1ա,բ, 2ա,բ, 3ա,բ)<sup>2</sup>, բոլոր օրինակները տեղացի վարպետների կողմից պատրաստվել են 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին: Դերեղ գյուղում գործածված մկրատամանի մի օրինակ էլ պահվում է Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանում (սկ.4ա,բ)<sup>3</sup>:

Մկրատամանները տեխնիկական հատկանիշներով զուգահեռվում և եզակի խումբ են կազմում կարպետահյուս առարկաների ընդհանուր համակարգում: Լոռիի տարբեր գյուղերից թանգարան բերված օրինակները հիմնականում մոտ 40×10սմ չափեր ունեն: Իրենցից ներկայացնում են միակտոր, երկերես տեխնիկայով հյուսվածքներ, որոնք ծավելով դառնում են երկտակ: Առարկաների դիմերեսները՝ դարձերեսի համեմատությամբ առավել խիտ զարդարված են ուղիղ օղաճիտ տեխնիկայով, զարդաձևերը կրկնում են գործվածքի այլ օրինակների հորինվածքները. վարդ (աստղածաղիկ, ծաղիկ), խնձոր-խաչ, թռչուններ և այլն (Իսրայելյան 1972, 7–9, 31; Դավթյան 1975, հավելված): Առարկաները հյուսված են բրդե, բամբակե թելերով, այծի մազով. բրդե թելերը կազմված են 2, 3 մանրաթելերից (ուղղությունը՝ S): Հիմնաթելերի և գործող թելերի համար կիրառվել է սպիտակ

<sup>1</sup> ՀԵԹ Ա-ՋԳ20 և ՀՊԹ Ա-11595/3:

<sup>2</sup> ՀՊԹ Ա-108, 109, 110:

<sup>3</sup> ԼՓԵԹ ԱՋԳ 01/2/28:

բուրդ. առաջինի պարագայում, զերծ են մնացել գունավորումից, երկրորդի՝ գունավորել բնական, նաև արհեստական ներկանյութերով: Կարպետագործության և գորգագործության մեջ վերոնշյալ թելերը ստանալու համար որպես կանոն կիրառվել է լավորակ բուրդ:

Վերոնշյալ տեխնիկական հատկանիշներից զատ, կարպետագործ առարկաները քննելիս, հետաքրքրական են նաև պարանագործ հատվածների հյուսելու ձևերը: Հանդիպում ենք այս խմբին բնորոշ պարանագործ հյուսվածքների մի քանի եղանակներ՝ հյուսկեն, կրկնահյուս և զամբյուղահյուս տարբերակներով (նկ. 1գ, 2գ, 3գ, 4գ): Հնարավորինս երկար գործածության նպատակով, կիրառման ընթացքում, բերանի հատվածները բրդե թելերով և բամբակե կտորներով ամրակայվել են: Բոլոր օրինակներների եզրերը գունավոր թելերով երկտակ խաչաձև կցված են և գունավոր թելերի փնջերի համադրությամբ զարդարված՝ գեղագիտական նշանակությունից զատ նաև պահպանակի դեր կատարելով:

Թելի մշակման և գորգագործության զարգացած շրջաններում՝ հյուսված առարկաներից զատ, աշխատանքային գործիքները ևս խորհրդանշանային մեկնաբանություններ են ստացել: Թելը ժողովրդական մտածողությամբ հանդես է եկել որպես հարթությունը, ժամանակը երևակայական կերպով «չափող», «սահմանող» «գործիք»: Մինչ օրս էլ գործածական են «կյանքի թելը կտրվել», «վախ չափել» արտահայտությունները (Նոր Դար 1887, 2): Ստեփան Լիսիցյանը 1930-ականներին Հաղպատում գրի է առել տարածված մի ավանդույթի մասին, ըստ որի վախը անցկացնելու համար մի թելով չափում էին վախեցածի հասակը և թելը դնում ննջեցյալի հետ (Լիսիցյան 1934, 66–67): Լիլիա Ավանեսյանը, մեջբերելով Գարեգին Սրվանձոյանի հաղորդած Վանի ավանդազրույցներից մեկը, ըստ որի Մհերի դռան ներսում գտնվող ճակատագրի անիվի՝ Ճախարակի (որի պտույտի դադարի դեպքում աշխարհը կավիրվեր) և սրբապատկերներում իլիկով թել մանող Տիրամոր կերպարի օրինակները՝ նշում է, որ մանածագործական գործիքները՝ իլիկն ու ճախարակը, ինչպես նաև գեղմը, բուրդը, թելը հնագույն պատկերացումներում կապվում էին արարչագործության հետ (Ավանեսյան 2020, 106): Ոչխարի բուրդը խուզելու և գորգ գործելու հարթության ժողովրդական անվանումը դազգահն է. գործածական էր «Աստծու դազգահ» արտահայտությունը, որն ունի «Աստծու ստեղծած կարգը» իմաստը<sup>4</sup>:

Այս հարթության վրա հատուկ մկրատով խուզում էին ոչխարի բուրդը: Խուզի համար նախատեսված մկրատները իրենցից ներկայացնում են զույգ հատու շեղքերով՝ կարկնաձև մետաղե գործիքներ, որոնք իրար են միանում պտուտակով կամ իրար կցվում (նկ. 5) (Գարամանճեան 1910, 944): Սրանք տեղի դարբինների աշխատանքներն էին: Լիլիա Ավանեսյանը, 2014թ. Լոռիում դաշտային նյութերի հիմամբ՝ հաղորդում է, որ Մարց գյուղում վերջին տոհմիկ դարբինը Խորեն Հակոբի Հովհաննիսյանն էր (1927–1997 թթ.) (Ավանեսյան 2014, 7):

<sup>4</sup> «Օրհնվի նրա (աստծու) դազգահը, վորին էնդադա դովլաթ է տալի ու վորիմեն օրվան թիքեն է խլում» (Լեզվի ինստիտուտ 2001, 298):

1836 թ. Սուրբ Ղազարում տպագրված «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» սովորածավալ աշխատանքում հեղինակները մկրատ բառը մեկնելիս մեջբերում են՝ «Զմորթն խզեալ մկրատաւ արար պատան» (Աւետիքեան և ուրիշներ 1836, 11, 285)<sup>5</sup>: Այն ոչխարը խուզելու նյութի, ձևի, միջոցի և նպատակի մասին փաստող կարևոր վկայություն է: Պատանելու սովորությունների ակունքները գալիս են հնագույն շրջանից, շարունակվում Քրիստոնեության և հասնում մինչև 20-րդ դարը: Ըստ Ստեփան Լիսիցյանի հաղորդման, ննջեցյալին լողացնելուց հետո պատանում էին, որի պատճառաբանությունն էր «առանց պատանքի Քրիստոսին չներկայանալը»: Վերջինս բացատրում է մայր Երկրի արգանդը վերադառնալու գաղափարը՝ պատանքը, որպես ընկերքի խորհրդանիշ (Լիսիցյան 1969, 21): Ժողովրդական բանահյուսության մեջ պահպանվել են սրա գործածությունը ակնարկող արտահայտություններ. «պատանքը կարել» – մեռնել, թաղել, «պատանքը պատռել» – առողջանալ (Աղայան 1976, 1185) և այլն:

Կախված նրանից, թե ինչ է հատվող առարկան՝ մկրատի անվանումները տարբեր են (Գայանեան 1938, 337)<sup>6</sup>: 19–20-րդ դդ. պատմական Հայաստանի տարբեր շրջաններում տարածված էր ոչխար խուզելու մկրատի «ղրլելիս» և «հեպրիկ» անվանումները (Գայանյան 1938, 337; Մատաղճեան 1959, 449): Սրանք կարևոր աշխատանքային գորիքներ էին հովիվների համար, որի մասին մի քանի անդրադարձներ կարդում ենք գեղարվեստական գրականության մեջ. «Մարում ոչխարը խուզելիս, երբ բրդով լի պարկերը դարսում էին իրար վրա, չոբանի ձեռքի մկրատը նրան աշխարհի միակ գործիքն էր թվում, որով մարդ կարող է աշխարհներ գրավել» (Բակունց 1964, 66): «Բնիկ գաղթականը» պատմվածքի հերոսը՝ Կոստանդր, ում նախնիները Լեռնատնից գաղթել էին Պարսկաստան, 1828 թ. Մակուից Լեռնատուն «վերադարձի» ճանապարհին հիշում էր, որ հեռավոր 1035 թ. օգոստոսին, իր Բեդվիին ձիուն հեծած, Լեռնատնից Անի էր գնացել քարագործ վարպետ Վահրամը ու այնտեղից ոչխար խուզելու մկրատ է բերել Ներսես հովվին (Գրիգորյան 2006, 59–60):

Լողիում բնական ռեսուրսները բարենպաստ էին ոչխարաբուծության զարգացման համար: Բրդե թելի որակի վրա՝ հետագա մշակման աշխատանքներից զատ, ազդում էր նաև արոտատեղիների բուսականությունը: 20-րդ դարի սկզբին սարը վերցնում էին դեպատիների գնահատությամբ (հեկտարով), որից հետո համայնքը իր ներսում էր բաժանում տարածքը՝ ըստ կենդանիների թվի (Լիսիցյան 1935, 21): Սարատեղիի հերթափոխից զատ կենդանիների առողջության պահպանման և բրդե թելի որակի ապահովման կարևոր պայմաններից էին խուզի համապատասխան ժամանակահատվածում աշխատանքների կազմակերպումը (Մելքոնյան, Տոդանյան 1969, 151): Հովիվներն էին հոգում կենդանու խնամքը: Երվանդ Լալայանը հաղորդում է, որ ամբողջ գավառին հայտնի բանիմաց հովիվները սակավաթիվ էին: Նրանցից էին հաղբատեցի «չոպան Գեւոն», ուզունլարցի

<sup>5</sup> Ըստ աշխատության տվյալների մեջբերումը՝ եկեղեցական վարդապետական քարոզների և գանձերի:

<sup>6</sup> Ձևիչ, որթատունկի՝ խիղբ, մոմի՝ բազմակալ, խեցգետնի՝ ունելիք, ճանկ և այլն:

(այժմ՝ Օձուն) «Աւետանց չոպան Բարսեղը» և ուրիշներ (Լալայան 1902, 203, 250): Ստեփան Լիսիցյանը 1930-ականներին և Աստղիկ Իսրայելյանը 1970-ականներին այս շրջանում վկայում են սրբատեղիների մասին («խաչ»), որտեղ հովիվները (հայեր, թուրքեր) տանում էին հիվանդ անասունը, ոչխարը դրա շուրջը երեք անգամ աջից ձախ քշում պտտեցնում, մատաղ մորթում (Լիսիցյան 1934, 4-5; Իսրայելյան 1972, 14):

Բրդե թելի մշակման ավանդույթների մասին փաստող հյուսված գործվածքների տարատեսակներն այս շրջանում բազմաթիվ են: Ինչպես ոչխարաբուծության զարգացած շրջաններում, այնպես և այստեղ, ոչխարների խուզի ժամանակ աղջիկներին բուրդ էին հատկացնում, որոնք հյուսում էին ընտանիքին անհրաժեշտ պարագաները: Ոչխարի բուրդը խուզելը ծիսակատարության է վերածվել. Ստեփան Լիսիցյանը նշում է, որ Շահնագարում հարսանիքի օրը որոշելուց հետո տղատերը «ոչխարախաղ» (= «կնդել») էր անում, խուզում էին ոչխարի բուրդն ու աղջկա տուն ուղարկում 8-16 կգ բուրդ (Լիսիցյան 1935, 3; Լալայան 1902, 221): Գյուղական կենցաղում կարպետագործ առարկաները օժիտի կարևոր տարրերից էին, որոնք ցուցադրելու էին նաև աղջկա վարպետությունը: Ե. Լալայանի Բորչալու գավառում գրի առած «բաժինք հիշեցնելու» ժողովրդական երգում՝ ի թիվս այլ առարկաների, նշում է տրվող մկրատամանների և հյուսված պարանների մասին.

*Շեն կենսա ինամին,  
Տվելա իր բարեկամին...  
Մի դոլիխի բուն,  
ԵՎ մի սանդրարուն...*

*Վեց հար տիրարեն,  
Շեն կենսա ու շեն* (Լալայան 1909, 237-238):

Է. Կարապետյանը նշում է, որ չնայած ընդհանուր առմամբ բովանդակային իմաստով «բաժինքի երգի» բաղադրիչները կրկնվում էին տարբեր պատմաագագրական շրջաններում, այնուամենայնիվ առանձին առարկաներ հատուկ էին որևէ շրջանին (Կարապետյան 1978, 10-17):

Նյութական մշակույթի համակարգում գործառությանն առարկեր նշանակության մի շարք առարկաներ՝ մանածագործական աշխատանքային գործիքները այդ թվում՝ զարդանախշվել են<sup>7</sup>, կիրառականից գատ, ինչպես վերում նշեցինք, ստացել խորհրդանշանային մեկնաբանություններ: Սարում կենդանին կորչելու միջոցին, երբ փնտրությունները նպատակին չէին ծառայում, շտապելով տուն՝ գեկապի աղոթք էին անել տալիս, որին զուգահեռ անհրաժեշտ էր կացինը մտցնել սանդերքի բերանը, որ նշանակում էր գայլի բերանը սուր կոխել (Նոր դար 1887, 2; Мкртымян 1974, 26-60): Սանդերքը չգործածելու ժամանակ սուր, «բաց» հատվածների (ատամների) միջև փայտի կտոր էր դրվում<sup>8</sup>: Մկրատի գործածության արգելքներից էր մկրատի բերանը բաց վայր չդնելը, օդում բաց չանելը՝ աներևույթ չարքերին դիպչելու և նրանց վրեժխնդրությունը չառաջացնելու համար: Միևնույն

<sup>7</sup> ՀՊԹ 4295, ՀԱՊԹ 3811, ԼՓԵԹ 2794, 2673, ԿԵԹ 1502:

<sup>8</sup> ՀԱՊԹ 7044, ԼՓԵԹ 2227/1:

Ժամանակ այն չարխափան պահպանակի դեր էր կատարում (Իսրայելյան 2013, 262; Լալայան 1896, 167): 19-րդ դարում Ակնում նորածնի հիվանդ լինելու դեպքում երկուսից երեք օր հետո մկրտում էին (հատկապես ունևորները՝ առաջնեկին): Դեռ նորածին հասակից ապագային միտված ծեսեր կատարելով՝ մկրտության տանելու ընթացքին՝ եթե տղա էր մայրը գիրք էր վերցնում՝ նպատակով թե կարդացող կլինի, իսկ եթե աղջիկ՝ մի ասեղ և թել, որպեսզի լավ կարել իմանա: Երեխային լվանալուց և բարեմաղթանքներ հնչեցնելուց հետո 40 օր լողացնում էին՝ ջրի մեջ մկրատ դնելով: Նաև ծննդկանը նույնքան տևական ժամանակ մկրատ էր դնում գոտու մեջ: Այս մկրատները նվեր էր տրվում, իսկ երևույթը բնորոշ է նաև այլ շրջաններին (Ճանիկեան 1895, 109):

Պետք է նկատենք, որ ժողովրդական մտածողությամբ խորհրդանշական նշանակություն ունեցող՝ աղ, հաց, սանր, մկրատ և այլ առարկաներ պահելու համար հյուսվել են կարպետագործ պարկեր (որոնցից առաջին երեքը թանգարանային հավաքածուներում ընդարձակ արտահայտություն ունեն): Սրանց կիրառական լինելը կապված է նաև նյութի տեխնիկական հատկանիշների հետ: Բուրդը = բրդե թելը = գորգը (կարպետը) ջերմամեկուսիչ է, թելթև է, ամուր, հիգրոսկոպիկ<sup>9</sup>: Հյուսված կարպետագործ պատյանը մետաղե մկրատը պահելու համար բարենպաստ ներքին միջավայր պետք է ստեղծեր, որը գործիքը կմեկուսացներ խոնավությունից: Խուզելու գործընթացը կատարվում է տարվա մեջ երկու անգամ: Աղվամազը պատված է ճարպով և պաշտպանված՝ արտաքին գործոններից: Գեղմի հիմքի ճարպային շերտը խուզելու ընթացքում նպաստում է մկրատի սահուն աշխատանքին:

Ամփոփելով նշենք, որ ոչխար խուզելու մկրատը դիտարկում ենք, որպես բրդե թելի մշակման նախնական գործընթացի իրականացումը ապահովող գործիք, որի կիրառման ընթացքը ինչ որ չափով նպաստում է մկրատի շերտերի հատկանիշների պահպանությանը: Առարկաների գործածության մատնանշված տարածաշրջանները գորգագործական խոշոր կենտրոններ էին. որով և հիմնավորվում են ոչխար խուզելու մկրատամանի նյութի ընտրության հանգամանքն ու դրանց մեկնաբանությունը: Վերոնշյալ մկրատամանները տնայնագործական առարկաներ են և հյուսվել են կարպետագործ հյուսվածքների բարդ տեխնիկաներով, լինելով օժիտի մաս՝ նաև ցուցադրելով աղջկա վարպետությունը: Չնայած առկա օրինակների սակավությանը, նկատենք, որ դրանց գեղարվեստական հարդարման ձևերը չեն կրկնվում, որով և ինչ որ չափով արտահայտում են անհատական էպիտեխիկ մոտեցումները: Երևույթը նաև հանդես է բերում առարկան, որպես մտածողություն արտահայտող՝ կիրառական, իմաստաբանական նշանակություն ունեցող յուրօրինակ ցուցիչ, այլ հարթության մեջ ընդգծելով գյուղական միջավայրում ստեղծված կիրառական արվեստի տնայնագործ օրինակները:

<sup>9</sup> Նկատում ենք, որ Լոռիում տնայնագործական գորգերը որպես կանոն բարձր խավ ունեն, որը հավանաբար պետք է կապել բնակարանային և կլիմայական պայմանների հետ. «բնակարաններն առողջապահական տեսանկյունից շատ մեծ պակասություններ ունեին, ...օրինակ խոնավ են, ...երբեք չեն տաքանում...» (Լալայան 1909, 148):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՂԱՅԱՆ 1976– Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976:

ԱՎԱՆԵՍՅԱՆ 2020 – Ավանեսյան Լ., Հայկական գորգերի զարդանների ծագումնաբանությունն ու ինաստաբանությունը, Երևան, «Անտարես», 2020:

ԱՎԱՆԵՍՅԱՆ 2014 – Ավանեսյան Լ., ԴԱՆ, Լոռի, 2014:

ԱԻԵՏԻՔԵԱՆ և ուրիշներ 1836 – Աւետիքեան Հայր Գ., Սիրմէլեան Հայր Խ., Աւգերեան Հայր Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Սուրբ Ղազար, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836:

ԲԱԿՈՒՆՅԱՆ 1964 – Բակունց Ա., Երկերի ժողովածու, Երևան, «Հայպետհրատ», 1964:

ԳԱՅԱՆԵԱՆ 1938 – Գայանեան Յ.Թ., Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, Գալֆա, 1938:

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ 1910 – Գարամաճեան Ս., Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ.Պոլիս, Տպագրութիւնն Ռ.Սազանեան, 1910:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2006 – Գրիգորյան Վ., Օթելլոյական շաբաթ, Երևան, ՀԳՄ, 2006:

ԴԱՎԹՅԱՆ 1975 – Դավթյան Ս.Ս., Հայկական կարպետ, Երևան, 1975:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 1972 – Իսրայելյան Ա., ԴԱՆ, Լոռի, 1972:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 2013 – Իսրայելյան Ա., Հայաստանի մայրաքաղաքները, Սանկական եզակի ապարանջան, Երևան, 2013, 256–265:

ԼԱԼԱՅԱՆ 1896 – Լալայան Ե., Ահ, Շուշի, 1896, 153–172:

ԼԱԼԱՅԱՆ 1902 – Լալայան Ե., Ահ, Թիֆլիս, 1902, 206–208, 246–262:

ԼԱԼԱՅԱՆ 1909 – Լալայան Ե., Ահ, Թիֆլիս, 1909, 237–238:

ԼԻՍԻՑՅԱՆ 1969 – Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, 207–217:

ԼԻՍԻՑՅԱՆ 1934 – Լիսիցյան Ստ., ԴԱՆ, ՀՊԹ ԱԱ 120, Լոբուտ, 1934:

ԼԻՍԻՑՅԱՆ 1934– Լիսիցյան Ստ., ԴԱՆ, ՀՊԹ ԱԱ 120, Հաղպատ, 1934:

ԼԻՍԻՑՅԱՆ 1935 – Լիսիցյան Ստ., ԴԱՆ, ՀՊԹ ԱԱ 204, Շահնազար, 1935:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 1978 – Կարապետյան Է., Օժիտը հայոց մեջ, Երևան, 1978:

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ 2001– Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, 2001:

ՂԱԶԱՐՅԱՆ 1993– Ղազարյան Մ., Արցախի արվեստի գանձերը, Անթիլիաս, 1993:

ՃԱՆԻԿԵԱՆ 1895 – Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895:

ՄԱՏԱՂՃԵԱՆ 1959 – Մատաղճեան Թ.Մ., Հուշամատենան Թոմարզայի, Պէյրուք, 1959:

«Նոր դար», Թիֆլիս, 1887, №125:

«Նոր Դար», Թիֆլիս, 1887, №126:

ՄԿՐՏՄՅԱՆ 1974 – Мкртумян Ю., Формы скотоводства в Восточной Армении, Ереван 1974:

Hasmik Petrosyan

*History Museum of Armenia*

hasmikpetrosyanmuseum@gmail.com

### WOVEN SCISSOR CASES' COLLECTION FROM LORI OF HISTORY MUSEUM OF ARMENIA

*keywords:* carpet maker, scissor cases, handicrafts, wool, sheep, shear shears, carpet weaving tools

In the museum fund of the Republic of Armenia there are few examples of cases of scissors provided for shearing wool, containers for weavers' scissors. According to the materials known to date, the main regions of use of these items were Lori, Syunik and Artsakh. The collection of ethnographic fabrics of the Historical Museum of Armenia was replenished with carpet scissors in 1934–35 as a result of scientific expeditions led by Stepan Lisitsyan (Lori).

The aforementioned regions have centuries-old traditions of processing and weaving wool yarn. The phenomenon manifests itself in a variety of woven products, which justifies the choice of the material of homemade shears for shearing sheep, which is due to both its presence and the assessment of its properties. Considering the products in the general group of carpet weaving items, their technical forms with a complex design, a variety of forms of decorations, and the forms of weaving of woven sections are indicated.

Асмик Петросян

*Музей истории Армении*

hasmikpetrosyanmuseum@gmail.com

### КОЛЛЕКЦИЯ ЛОРИЙСКИХ ТКАНЫХ ФУТЛЯРОВ ДЛЯ НОЖНИЦ ИСТОРИЧЕСКОГО МУЗЕЯ АРМЕНИИ

*ключевые слова:* ковровщик, тара для ножниц, кустарный промысел, шерсть, овца, ножницы для острига, инструменты для ткачества ковров

В музейном фонде РА примеры предусмотренных для острига шерсти футляров ножниц, тар для ножниц ткачей немногочислены. По известным до настоящего времени материалам, основными регионами пользования этих предметов были Лори, Сюник и Арцах. Коллекция этнографических тканей Исторического музея Армении пополнилась ковровыми ножницами в 1934-35 годах в результате научных экспедиций под руководством Степана Лисицяна (Лори).

Вышеупомянутые регионы имеют многовековые традиции обработки и ткачества шерстяной пряжи. Феномен проявляется в разнообразии тканых изделий, что оправдывает выбор материала самодельных ножниц для стрижки овец, который обусловлен как его наличием, так и оценкой его свойств. Рассматривая изделия в общей группе предметов ковроделия, указаны их технические формы со сложной конструкцией, многообразием форм украшений, формами плетения тканых участков.